



«ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ

**Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ 2025թ. համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորական եզրակացություն

"Դալմա Ինվեստ" ՍՊԸ նկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Դալմա Ինվեստ" ՍՊԸ-ի և իր դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2025թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՅՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" հատվածում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Եթիկայի կանոնագրքի (ՀԵՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԵՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՅՄՍ) համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու

համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են իմքի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե իմքի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արևմտահայտության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել իմքի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի

բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել խմբին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ խմբի ներսում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ցոլակ Մակարյանն է:

25 հունիսի 2026թ.

Գագիկ Գրիգորյան
Բաժնետեր տնօրեն



"ՋիՓի մենեջմենթ քոնսլտինգ" ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



Ցոլակ Մակարյան
Առաջադրանքի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2025թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	8,703,258	9,068,647
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	21	99,546	43,234
Ոչ նյութական ակտիվներ		65,571	68,483
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	6	2,000	2,000
Տրված փոխառություններ	7	699,356	829,870
Հետաձգված հարկային ակտիվներ	19	226,545	168,307
Ոչ ընթացիկ ակտիվներ		9,796,276	10,180,541
Պաշարներ	8	153,813	238,674
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	9	740,738	702,220
Տրված փոխառություններ	7	76,355	118,971
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	452,954	369,362
Ընթացիկ ակտիվներ		1,423,860	1,429,227
Ընդամենը ակտիվներ		11,220,136	11,609,768
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		50	50
Զբաղիված շահույթ		966,600	1,613,985
Հետ գնված չտեղաբաշխված կապիտալ (500,000)		(500,000)	(500,000)
Սեփական կապիտալի այլ տարրեր		2,250,705	1,635,975
Ընդամենը սեփական կապիտալ	11	2,717,355	2,750,010
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	21	42,956	14,703
Ոչ ընթացիկ պարտավորություններ		42,956	14,703
Վարձակալության գծով պարտավորություններ	21	20,297	5,990
Ստացված փոխառություններ	13	7,512,485	7,626,637
Շահութահարկի գծով պարտավորություն		481,368	422,567
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	14	445,675	789,861
Ընթացիկ պարտավորություններ		8,459,825	8,845,055
Ընդամենը պարտավորություններ		8,502,781	8,859,758
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		11,220,136	11,609,768

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Վրամ Կարապետյան, Ժամարա Զակոբյան

Գլխավոր տնօրեն "Էմ Էյ Փ Զոնսալթինգ" ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 44-րդ էջերում ներկայացված համախմբված հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին
համախմբված հաշվետվություն 2025թ. համար**

հազ. դրամ	Ծնթգ.	2025թ.	2024թ.
Հասույթ	15	5,502,920	5,086,867
Աշխատակիցներին հատուցումներ		(290,965)	(314,353)
Մաշվածք և ամորտիզացիա		(842,709)	(774,110)
Կոմունալ ծախսեր	16	(380,859)	(450,535)
Խորհրդատվական ծախսեր		(51,521)	(39,468)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(105,454)	(93,016)
Մարկետինգի և գովազդի ծախսեր		(204,986)	(162,742)
Ապահովագրական ծախսեր		(10,118)	(12,268)
Հիմնական միջոցների օտարումներից եկամուտներ		(45,034)	(5,029)
Այլ եկամուտ		27,198	51,734
Այլ ծախս	17	(725,987)	(334,043)
Գործառնական գործունեության արդյունքներ		2,872,485	2,953,037
Ֆինանսական եկամուտ		332,109	281,642
Ֆինանսական ծախս		(222,694)	(260,411)
Չուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	18	109,415	21,231
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		2,981,900	2,974,268
Շահութահարկի գծով ծախս	19	(529,285)	(516,228)
Տարված շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ		2,452,615	2,458,040

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 44-րդ էջերում ներկայացված համախմբված հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված
հաշվետվություն 2025թ. համար**

հազ. դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Հետ գնված չտեղաբաշխված կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ. Ընդամենը համապարփակ եկամուտ	50	2,405,945	-	991,500	3,397,495
Տարվա շահույթ	-	2,458,040	-	-	2,458,040
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	2,458,040	-	-	2,458,040
Գործառնություններ սեփականատերերի հետ					
Հայտարարված շահաբաժիններ	-	(3,250,000)	-	644,475	(2,605,525)
Հետ գնված չտեղաբաշխված կապիտալ	-	-	(500,000)	-	(500,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	(3,250,000)	(500,000)	644,475	(3,105,525)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	50	1,613,985	(500,000)	1,635,975	2,750,010
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ. Ընդամենը համապարփակ եկամուտ	50	1,613,985	(500,000)	1,635,975	2,750,010
Տարվա շահույթ	-	2,452,615	-	-	2,452,615
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	2,452,615	-	-	2,452,615
Գործառնություններ սեփականատերերի հետ					
Հայտարարված շահաբաժիններ	-	(3,100,000)	-	614,730	(2,485,270)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	(3,100,000)	-	614,730	(2,485,270)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	50	966,600	(500,000)	2,250,705	2,717,355

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 44-րդ էջերում ներկայացված համախմբված հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2025թ. համար

հազ. դրամ	ճնթգ.	2025թ.	2024թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Վաճառքների գծով ստացված դրամական հոսքեր		6,651,031	6,049,160
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(1,015,028)	(1,803,308)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(287,439)	(381,751)
Վճարումներ պետական բյուջե, բացառությամբ շահութահարկի		(1,086,490)	(1,060,627)
Վճարված շահութահարկ		(528,722)	(598,292)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ մուտքեր		(706)	7,428
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր		3,732,646	2,212,610
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների վաճառքից		1,100	10,870
Հիմնական միջոցների ձեռքբերումից		(554,578)	(109,883)
Ստացված տոկոսներ		19,705	53,903
Տրված փոխառությունների, ներդրված ավանդների վերադարձ		-	2,491,230
Տրված փոխառություններ, ներդրված ավանդներ		(537,229)	(3,334,013)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր		(1,071,002)	(887,893)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ		(2,044,110)	(1,451,633)
Ստացված փոխառություններ		500,000	-
Փոխառության վերադարձ		(500,000)	-
Բաժնեմասի հատուցում		(500,000)	-
Ֆինանսական վարձակալության գծով վճարված մայր գումարներ		(24,405)	-
Ֆինանսական վարձակալության գծով վճարված տոկոսներ		(9,609)	(9,609)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր		(2,578,124)	(1,461,242)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ			
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		83,520	(136,525)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների համար		369,362	508,789
		72	(2,902)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	10	452,954	369,362

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 44-րդ էջերում ներկայացված համախմբված հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

**2025թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից
ծանոթագրություններ**

Ծանոթագրություն	Էջ	Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու ընկերություն	11	16. Կոմունալ ծախսեր	20
2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ	12	17. Այլ ծախս	21
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	12	18. Չուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	21
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12	19. Շահութահարկ	21
5. Հիմնական միջոցներ	14	20. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	22
6. Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	16	21. Վարձակալություն	27
7. Տրված փոխառություններ	16	22. Պայմանական դեպքեր	28
8. Պաշարներ	16	23. Կապակցված կողմերի բացահայտումներ	29
9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	16	24. Չափման հիմունքներ	29
10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր	29
11. Կապիտալ և պահուստներ	17	26. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	43
12. Կապիտալի կառավարում	18	27. Հետհաշվեկշռային իրադարձություններ	44
13. Ստացված փոխառություններ	18		
14. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19		
15. Հասույթ	20		

1. Հաշվետու ընկերություն

(a) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական ռազմական հակամարտությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև, որոնց ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում էր հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը: Այնուամենայնիվ, հռչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

(b) Կառուցվածքը և հիմնական գործունեությունը

"Դալմա Ինվեստ" ՍՊԸ-ն (այսուհետ՝ "Ընկերություն", իսկ Դուստր Ընկերությունների հետ միասին՝ "Խումբ") հիմնադրվել է 2006թ. հունիսին Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերությունը վերահսկվում է Տիգրան Կարապետյանի և "Թի Սի Ռիելթի" ՓԲԸ-ի կողմից, որոնց պատկանում է բաժնեմասերի համապատասխանաբար 34 և 46 տոկոսը: Մնացած՝ 20 տոկոսը պատկանում է "Դալմա Ինվեստ" ՍՊԸ-ին: Ընկերության հիմնական գործունեությունն է առևտրի իրականացման վայրի կազմակերպումը, որի լիցենզիան՝ թիվ 000115 տրամադրվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2012թ.-ին:

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են "Փլեյ Բոքս" ՍՊԸ-ի և "Դալմա Գիֆթ Բոքս" ՍՊԸ-ի (Դուստր Ընկերություններ) ֆինանսական հաշվետվությունները: Ընկերության Դուստր Ընկերություններում բաժնեմասը կազմում է 100%:

Դուստր Ընկերությունների հիմնական գործունեությունը օրենքով չարգելված գործունեության իրականացումից շահույթի ստացումն է:

Ընկերության և Դուստր Ընկերությունների իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3:

Խմբի աշխատակիցների քանակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 57 (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 53):

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(a) Համապատասխանության հավաստում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) համաձայն:

(b) Անընդհատություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իմբի ընթացիկ պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ակտիվները 7,035,965 հազար դրամով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,415,828 հազար դրամով): Այնուամենայնիվ, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա իմբի շահույթը և գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքերը կազմել են համապատասխանաբար 2,452,615 հազար դրամ և 3,732,646 հազար դրամ (2024թ. ավարտված տարվա համար համապատասխանաբար 2,458,040 հազար դրամ և 2,212,610 հազար դրամ), և ղեկավարությունն ակնկալում է, որ առաջիկա տարիներին իմբի գործունեությունը կլինի շահութաբեր, և այն կստեղծի բավարար դրամական հոսքեր պարտավորությունները ժամանակին կատարելու համար:

Բացի այդ, խումբը հնարավորություն ունի անհրաժեշտության դեպքում ներգրավելու արտաքին ֆինանսական միջոցներ, ինչպես նաև ստանալու աջակցություն մասնակիցներից կամ փոխկապակցված կողմերից՝ դրամական հոսքերը ապահովելու համար:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ ղեկավարությունը գտնում է, որ չկա էական անորոշություն անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու իմբի կարողության հետ կապված:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը իմբի ֆունկցիոնալ արժույթն է և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՀՀՄՍ պահանջներին համապատասխան կազմվելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները պարբերաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի

ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 25(հ) – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ,
- Ծանոթագրություն 25(կ) – առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափում:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխումները Խումբը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում՝ «Ֆինանսական գործիքներ»:

5. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդամասեր	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորում ներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Անավարտ շինարարությ ուն	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	2,336,111	11,897,046	1,282,508	49,102	179,668	49,352	157,798	15,951,585
Ավելացումներ	-	830,478	10,587	-	55,578	7,758	12,405	916,806
Օտարումներ	-	-	-	(25,220)	(6,489)	-	-	(31,709)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,336,111	12,727,524	1,293,095	23,882	228,757	57,110	170,203	16,836,682
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	2,336,111	12,727,524	1,293,095	23,882	228,757	57,110	170,203	16,836,682
Ավելացումներ	-	441,094	16,286	690	12,634	-	17,135	487,839
Օտարումներ	-	-	(125,697)	(440)	(79,879)	-	(58,923)	(264,939)
Ներքին տեղաշարժ	-	7,758	-	-	-	(7,758)	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	2,336,111	13,176,376	1,183,684	24,132	161,512	49,352	128,415	17,059,582
Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ								
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	-	5,637,433	1,174,100	20,458	113,183	-	88,456	7,033,630
Մաշվածություն	-	687,193	25,723	4,250	23,198	-	18,820	759,184
Օտարումներ	-	-	-	(18,290)	(6,489)	-	-	(24,779)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	6,324,626	1,199,823	6,418	129,892	-	107,276	7,768,035
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	-	6,324,626	1,199,823	6,418	129,892	-	107,276	7,768,035
Մաշվածություն	-	773,436	24,200	2,547	15,024	-	15,881	831,088
Օտարումներ	-	-	(124,943)	(237)	(65,446)	-	(52,173)	(242,799)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	-	7,098,062	1,099,080	8,728	79,470	-	70,984	8,356,324

ԴԱԼՄԱ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ

2025թ. համախառնված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

հազ. դրամ	Հոդամասեր	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորում ներ	Տրանսպորտային և միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Անավարտ շինարարությ ուն	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք								
Առ 1 հունվարի 2024թ.	2,336,111	6,259,613	108,408	28,644	66,485	49,352	69,342	8,917,955
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,336,111	6,402,898	93,272	17,464	98,865	57,110	62,927	9,068,647
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	2,336,111	6,078,314	84,604	15,404	82,042	49,352	57,431	8,703,258

6. Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Խմբի ներդրումները ներկայացված են ստորև

հազ. դրամ	Մասնաբաժին (%)	2025թ.	2024թ.
Իքս Այս ՍՊԸ	30	2,000	2,000
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ		2,000	2,000

7. Տրված փոխառություններ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ոչ ընթացիկ փոխառություններ		
Կապակցված կողմերին տրված փոխառություններ	699,356	829,870
Ընթացիկ փոխառություններ		
Կապակցված կողմերին տրված փոխառություններ	76,355	118,971
Ընդամենը տրված փոխառություններ	775,711	948,841

8. Պաշարներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Հումք և նյութեր	91,948	167,837
Սահադաշտ	-	59,367
Ծինանյութեր	31	260
Վառելիք	872	108
Այլ նյութեր	60,962	11,102
	153,813	238,674

9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	1,059,359	1,014,681
Տրված կանխավճարներ	200,340	217,700
Պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքեր	11,539	9,096
Այլ դեբիտորական պարտքեր	95	100
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(530,595)	(539,357)
Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	740,738	702,220

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Կանխիկ միջոցներ	-	140
Բանկային հաշիվների մնացորդներ	252,954	218,976
Ցայահանջ բանկային ավանդներ	200,000	150,246
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	452,954	369,362

Տոկոսադրույքային ռիսկին խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 20-ում:

11. Կապիտալ և պահուստներ

(a) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է խմբի հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

2025թ-ին և 2024թ-ին խմբի կանոնադրական կապիտալում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

(b) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ խմբի բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են խմբի ՀՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2025 թվականին խմբի կողմից հայտարարված 3,100,000 հազար ՀՀ դրամ շահաբաժիններից 614,730 հազար ՀՀ դրամը (19.83%) վերագրվել է «Սեփական կապիտալի այլ տարրեր» հոդվածին՝ որպես խմբին պատկանող սեփական բաժնեմասերի բաժին: Մնացած 2,485,270 հազար ՀՀ դրամը մարվել է անկանխիկ վճարման (2,044,110 հազար ՀՀ դրամ), փոխառությունների փոխհատուցման (387,639 հազար ՀՀ դրամ) և եկամտային հարկի պահման (53,522 հազար ՀՀ դրամ) միջոցով:

2024 թվականին հայտարարված 3,250,000 հազար ՀՀ դրամ շահաբաժիններից 644,475 հազար ՀՀ դրամը (19.83%) վերագրվել է «Սեփական կապիտալի այլ տարրեր» հոդվածին: Մնացած 2,605,525 հազար ՀՀ դրամը մարվել է փոխառությունների փոխհատուցման (1,270,596 հազար ՀՀ դրամ) և եկամտային հարկի պահման (65,207 հազար ՀՀ դրամ) միջոցով, իսկ վճարված 1,451,633 հազար ՀՀ դրամը ներառում է նախորդ տարվա կուտակված 181,911 հազար ՀՀ դրամ պարտավորության մարումը:

(c) Վերահսկվող բաժնեմասերի նկատմամբ կանխավճար

2024 թվականի դեկտեմբերի 20-ին Ընկերությունը կնքել է բաժնեմասի արժեքի հատուցման համաձայնագիր Ծովինար Շահումյանի հետ՝ որպես Էդգար Տիգրանի Խաչատրյանի իրավահաջորդ: Համաձայն պայմանագրի՝ Ընկերությունը պետք է վճարի 500 մլն ՀՀ դրամ՝ որպես կանխավճար Ընկերության բաժնեմասերի 19.83%-ի 1/8-ին համապատասխան բաժնեմասի դիմաց: Քանի որ բաժնեմասը հաշվառված է Ընկերության անուսով և վերահսկվում է Ընկերության կողմից, սակայն իրավունքային փոխանցումը դեռ ամբողջությամբ չի ավարտվել, կատարված կանխավճարը հաշվառվել է որպես «Վերահսկվող բաժնեմասերի նկատմամբ կանխավճար», ինչը ներկայացված է որպես բացասական տարր սեփական կապիտալում:

(d) Սեփական կապիտալի այլ տարրեր

Սեփական կապիտալի այլ տարրերը ներառում են խմբի կողմից իրեն պատկանող բաժնեմասերին վերագրվող շահույթը (տե՛ս Ծանոթագրություն 11(b)):

12. Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, խմբի հասույթի և շահույթի շարունակական հսկողության և հիմնականում վարկերի ու փոխառությունների միջոցով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այս քայլերն Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ստորև ներկայացված է խմբի պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը հաշվետու տարվա վերջի դրությամբ:

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ընդամենը պարտավորություններ	8,502,781	8,859,758
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	452,954	369,362
2025 պարտքը	8,049,827	8,490,396
Ընդամենը սեփական կապիտալ	2,717,355	2,750,010
2025 պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը առ 31-ը դեկտեմբերի	0.34	0.32

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող խմբի մոտեցումը չի փոփոխվել:

Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

13. Ստացված փոխառություններ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	7,512,485	7,626,637
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ	7,512,485	7,626,637

Տոկոսադրույքային, արժույթային և իրացվելիության ռիսկերին խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

(a) Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են փոխառություններ համար գործող պայմանները և մարման ժամկետները:

հազ. դրամ	Արժույթ	Անվան ալ. տոկոսա դր.	Մարմա ն տարի	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
				Անվանա չ. արժեք	Հաշվեկշ ռ. արժեք	Անվանա չ. արժեք	Հաշվեկշ ռ. արժեք
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	ԱՄՆ դոլար	0%	2026	2,242,574	2,242,574	2,331,957	2,331,957
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	ԱՄՆ դոլար	0%	2026	3,478,969	3,478,969	3,617,632	3,617,632

հազ. դրամ	Արժույթ	Անվան ալ. տոկոսա դր.	Մարմա ն տարի	31 դեկտեմբերի 2025թ.		31 դեկտեմբերի 2024թ.	
				Անվանա կ. արժեք	Հաշվեկշ ռ. արժեք	Անվանա կ. արժեք	Հաշվեկշ ռ. արժեք
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	ԱՄՆ դոլար	0%	2026	402,087	402,087	418,112	418,112
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	Եվրո	2.25%	2026	1,389,325	1,389,325	1,258,936	1,258,936
Ընդամենը ստացված փոխառություններ				7,512,485	7,512,485	7,626,637	7,626,637

(b) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Ստացված փոխառություններ	
	2025թ.	2024թ.
Մնացորդը առ 1 հունվարի	7,626,637	7,838,671
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված		
Մուտքեր փոխառություններից	500,000	-
Փոխառությունների մարում	(500,000)	-
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ	(137,716)	(233,815)
Այլ փոփոխություններ		
Պարտավորությունների հետ կապված փոփոխություններ		
Տոկոսային ծախս	23,564	21,781
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	23,564	21,781
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	7,512,485	7,626,637

14. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	65,983	52,614
Բյուջեի գծով կրեդիտորական պարտքեր	65,071	365
Հետ գնված չտեղաբաշխված կապիտալի գծով պարտավորություններ (տե՛ս ծնթ. 11)	-	500,000
Ստացված կանխավճարներ	282,709	210,550
Արձակուրդային պահուստ	31,912	26,332
Ընդամենը առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	445,675	789,861

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժութային և իրացվելիության ռիսկերին խմբին ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

15. Հասույթ

(a) Հասույթի ուղղություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ծառայությունների հիմնական տեսակներ		
Առևտրի իրականացման վայրի կազմակերպումից հասույթ	5,393,409	4,964,518
Չվարձանքի և հանգստի կազմակերպում	109,511	122,349
	5,502,920	5,086,867
Հասույթի ճանաչման ժամկետներ		
Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ	5,502,920	5,086,867
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	5,502,920	5,086,867

(b) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խուճբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Առևտրի իրականացման վայրի կազմակերպումից հասույթ

Խմբի եկամուտը ձևավորվում է առևտրի իրականացման վայրերի տրամադրման արդյունքում՝ տարածքների վարձակալության գործող պայմանագրերի շրջանակում: Վարձակալությունից գոյացող եկամուտը ճանաչվում է ամսական կտրվածքով՝ հավասարաչափ բաշխման մեթոդով ամբողջ վարձակալության ժամանակահատվածի ընթացքում: Վարձակալությունից առաջ ստացված վճարումները հաշվառվում են որպես հետագա պարտավորություն մինչև եկամտի ճանաչումը:

16. Կոմունալ ծախսեր

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Էլեկտրաէներգիա	197,195	250,569
Մաքրման ծառայություն	102,265	101,733
Գազ	40,299	46,186
Նյութեր	26,745	22,643
Ջուր	13,776	15,426
Այլ	579	13,978
	380,859	450,535

17. Այլ ծախս

հազ. դրամ

Տրված փոխառությունների դուրսգրում
Հիմնական միջոցների սպասարկման և
նորոգման ծախսեր
Անվտանգություն
Խաղարկություն
Նվիրատվություն
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր
Այլ

2025թ.	2024թ.
307,254	-
171,040	140,303
72,190	76,780
54,861	36,791
17,180	18,398
2,795	2,659
100,667	59,112
725,987	334,043

18. Չուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)

հազ. դրամ

Ներդրված ավանդներից տոկոսային եկամուտ
Տրված փոխառությունների գծով տոկոսային
եկամուտ
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից

2025թ.	2024թ.
19,705	41,631
173,616	36,694
138,788	203,317
332,109	281,642

Ֆինանսական եկամուտ

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով
հաշվարկված տոկոսային ծախս
Ստացված վարկերի գծով տոկոսային ծախսեր
Ստացված փոխառությունների գծով տոկոսային
ծախսեր՝ բացի հիմնադիրներից

(189,081)	(234,773)
(10,049)	(3,857)
(23,564)	(21,781)
(222,694)	(260,411)

Ֆինանսական ծախսեր

**Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ
ֆինանսական ծախսեր**

109,415	21,231
----------------	---------------

19. Շահութահարկ

(a) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է 18% դրույքաչափով (2024թ-ին՝ 18%):

հազ. դրամ

Ընթացիկ հարկի գծով ծախս

Ընթացիկ տարի

2025թ.	2024թ.
587,523	545,848

Հետաձգված հարկի գծով ծախս

Ժամանակավոր տարբերությունների առաջացում
և հակադարձում

(58,238)	(29,620)
----------	----------

Ընդամենը ծախս շահութահարկի գծով

529,285	516,228
----------------	----------------

Հարկի արդյունավետ դրույթաչափի համադրում

հազ. դրամ	2025թ.		2024թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	2,981,900	100	2,974,268	100
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի				
կիրառելի դրույթաչափով	536,742	18	535,368	18
Չսկսված ցուցվող ծախսեր	(7,457)	(0.3)	(19,140)	(0.6)
	529,285	17.7	516,228	17.4

(b) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Չուտ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցներ	-	(1,756)	37	-	37	(1,756)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(94,537)	(93,599)	-	-	(94,537)	(93,599)
Տրամադրված փոխառություններ	(126,301)	(68,212)	-	-	(126,301)	(68,212)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(5,744)	(4,740)	-	-	(5,744)	(4,740)
Չուտ հարկային (ակտիվներ)/ պարտավորություններ	(226,582)	(168,307)	37	-	(226,545)	(168,307)

(c) Հետաձգված հարկի մնացորդների փոփոխություններ

Հետաձգված հարկի մնացորդների բոլոր փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

20. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(a) Հաշվապահական հաշվառման դասակարգումներ և ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

(b) Իրական արժեքի չափում

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Տեսակը	Գնահատման մեթոդը	Նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները
Ֆինանսական ակտիվներ	Չեղջված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Չեղջված դրամական հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական կրեդիտորական պարտքերը (2024թ-ին ներառում էին վարկերը և փոխառությունները, առևտրական կրեդիտորական պարտքերը):

(c) **Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս հստակ ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ ((տես Ծանոթագրություն 20(c)(ii)),
- իրացվելիության ռիսկ ((տես Ծանոթագրություն 20(c)(iii)),
- շուկայական ռիսկ ((տես Ծանոթագրություն 20(c)(iv)).

(i) **Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Դեկլարությունը պատասխանատու է համբի ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման և հսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, ինչպես նաև հսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների և կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ստեղծել հսկողության կանոնակարգված և գործող համակարգ, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում ունեն իրենց դերերի և պարտականությունների մասին:

(ii) **Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Ստորև ներկայացված են շահույթում կամ վնասում ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները:

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Տրված փոխառությունների արժեզրկումից կորուստ	(307,254)	-

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի վերականգնում	8,762	23,680

Առևտրական դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին համբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի բնութագրերից: Խմբում չի գործում ձևակերպված քաղաքականություն, որը կպահանջեր վերլուծել յուրաքանչյուր նոր հաճախորդի վճարունակությունը: Խումբը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի գծով:

Խմբի հաճախորդներից ոչ մեկը չունի արտաքին պարտքային վարկանիշ:

Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններ

Ստորև ներկայացված են առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի փոփոխությունները տարվա ընթացքում:

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Մնացորդը առ 1 հունվարի	539,357	563,037
Կորստի պահուստի գույտ վերաչափում	(8,762)	(23,680)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	530,595	539,357

Խումբը դուրս է գրում ավելի քան երեք տարի ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 452,954 հազար դրամ գումարով բանկային ավանդների և հաշիվների մնացորդներ (2024թ-ին՝ 369,222 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այդ ակտիվների հետ կապված: Խմբի դրամական միջոցների և դրանց համարժեքների մեծ մասը պահվում է «Moody's» վարկանիշային գործակալության Baa2 վարկանիշով հայկական բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Ընթացիկ հաշիվներն ամբողջությամբ դասված են 1-ին փուլ, և ակնկալվող պարտքային կորուստները չափվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիմունքով և արտացոլում են ընթացիկ հաշիվների մնացորդների և ավանդների կարճաժամկետ բնույթը:

Խմբի մոտեցումը դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների գնահատմանը ներկայացված է Ծանոթագրություն 20-ի (k) կետում:

Խմբի գնահատմամբ ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետայնության պատճառով:

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել, որքանով հնարավոր է, բավարար իրացվելիություն սովորական և արտասովոր պայմաններում պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

Խուժմն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը, այդ թվում՝ ֆինանսական պարտականությունները կատարելու համար: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների, օրինակ՝ բնական աղետների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ ողջամտորեն կանխատեսել:

Ենթարկվածությունն իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չգեղջված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտեմբերի 2025թ.

հազ. դրամ Ֆինանսական պարտավորություններ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր					
		Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 12 ամիս	1-2 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	7,512,485	7,512,485	1,389,325	6,123,160	-	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	63,253	63,253	-	20,297	23,496	19,460	-
	65,983	65,983	-	65,983	-	-	-
	7,641,721	7,641,721	1,389,325	6,209,440	23,496	19,460	-

31 դեկտեմբերի 2024թ.

հազ. դրամ Ֆինանսական պարտավորություններ	Հաշվեկշռ. արժեք	Պայմանագրային դրամական հոսքեր					
		Ընդամենը	Ցպահանջ	Մինչև 12 ամիս	1-2 տարի	3-5 տարի	Ավելի քան 5 տարի
Գրավով չապահովված փոխառություններ այլ ընկերություններից	7,626,637	7,626,637	1,258,936	6,367,701	-	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	20,693	20,693	-	5,990	14,703	-	-
	52,614	52,614	-	52,614	-	-	-
	7,699,944	7,699,944	1,258,936	6,426,305	14,703	-	-

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական հոսքերը կարող են առաջանալ նշվածից նշանակալիորեն ավելի վաղ կամ նշանակալիորեն տարբեր գումարներով:

(iv) Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ արտադրության փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխությունների հետևանքով: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն

ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Խումբը չի կիրառում հեջի հաշվառում շահույթի կամ վնասի փոփոխականությունը կառավարելու համար:

Արժույթային ռիսկ

Խումբը ենթարկվում է արժույթային ռիսկին իր ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթներով արտահայտված փոխառությունների հետ կապված: Այս գործառնություններն հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժույթային ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ			ԱՄՆ		
	դոլարով արտահայտված 2025թ.	եվրոյով արտահայտված 2025թ.	Ռուբլիով արտահայտված 2025թ.	դոլարով արտահայտված 2024թ.	եվրոյով արտահայտված 2024թ.	Ռուբլիով արտահայտված 2024թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,570	12	2,331	15,995	286	1,785
Ստացված փոխառություններ	(6,131,256)	(1,389,325)	-	(6,375,632)	(1,258,936)	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(540)	(80)	-	-	(63)	-
Համախառն ենթարկվածություն	(6,118,226)	(1,389,393)	2,331	(6,359,637)	(1,258,713)	1,785

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
1 ԱՄՆ դոլար	387.01	392.73	381.36	396.56
1 Եվրո	436.98	424.86	449.01	413.89
1 Ռուբլի	4.64	4.24	4.87	3.71

Չգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր աճը (նվազումը) ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Աճ	Նվազում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
31 դեկտեմբերի 2025թ.		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	611,823	(611,823)
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ	138,939	(138,939)
ՀՀ դրամի 10% շարժ ռուբլու նկատմամբ	(233)	233
31 դեկտեմբերի 2024թ.		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	635,965	(635,965)

հազ. դրամ

	Աճ	Նվազում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
ՀՀ դրամի 10% շարժ եվրոյի նկատմամբ	125,871	(125,871)
ՀՀ դրամի 10% շարժ ռուբլու նկատմամբ	(179)	179

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք)։

Հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի բոլոր տոկոսակիր պարտավորությունների համար գործում է ֆիքսված տոկոսադրույք։

Խումբը չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես վաճառքի համար մատչելի։ Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա։

21. Վարձակալություն

(a) Խումբը՝ որպես վարձակալ

**հազ. դրամ
2025**

Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին
Տարվա մաշվածության գումար

Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հիմնական միջոցներ

43,234
66,739
(10,427)
99,546

**հազ. դրամ
2024**

Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ
Ավելացումներ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներին
Տարվա մաշվածության գումար

Հիմնական միջոցներ

29,118
19,163
(5,047)

հազ. դրամ	Հիմնական միջոցներ
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	43,234

(i) Ճահողություն կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ	10,049	3,857

(ii) Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ճանաչված գումարներ

հազ. դրամ	2025թ.	2024թ.
Ընդամենը դրամական միջոցների արտահոսք վարձակալության գծով	34,014	9,609

22. Պայմանական դեպքեր

(a) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը, որն անմիջական ներգրավված չէ դատական վարույթներում կամ այլ հայցերում որպես պատասխանող, այնուամենայնիվ դրանց արդյունքում Ընկերության համար առաջացող հնարավոր պարտականությունը մոտարկված չափով կարող է կազմել 1,321,250 հազար ՀՀ դրամ:

Հնարավոր պարտականությունը դա որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն հսկվում կազմակերպության կողմից:

(b) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(c) Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա

միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23. Կապակցված կողմերի բացահայտումներ

(a) Մայր կազմակերպություն և վերջնական հսկող կողմ

Խմբի հիմնական բաժնետերերն են՝ «Թի Սի Ռիելթի» ՓԲ ընկերությունը (46%), Տիգրան Կարապետյանը (34%), և Դալմա Ինվեստ ՍՊ ընկերությունը (20%): «Թի Սի Ռիելթի» ՓԲ ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվությունները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի վերջնական հսկող անձն է Տիգրան Կարապետյանը:

(b) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսերի հոդվածում:

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	31,734	26,570	5,348	4,583

(c) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Ստացված փոխառություններ	500,000	-	-	-
Տրված փոխառություններ	537,229	1,784,013	775,711	948,841

24. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Խումբը հետևողականորեն կիրառել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

(a) Համախմբման հիմունքներ

(i) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է խմբին:

Խումբը գուդվիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած
- ձեռք բերվող կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած
- ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած
- ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, զեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում: Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք Խումբը կրում է ձեռնարկատիրական գործունեության միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

(ii) Չվերահսկող բաժնեմաս

Չվերահսկող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

(iii) Դուստր կազմակերպություններ

Դուստր կազմակերպությունները խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վնասը բաշխվում է չվերահսկող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չվերահսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

(iv) Վերահսկողության կորուստ

Վերահսկողությունը կորցնելիս Խումբն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները և պարտավորությունները, չվերահսկող բաժնեմասերը և դուստր կազմակերպությանը վերաբերող սեփական կապիտալի այլ բաղադրիչները: Վերահսկողությունը կորստի արդյունքում առաջացող ավելցուկը կամ պակասորդը

ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հսումբը պահպանում է մասնակցություն նախկին դուստր կազմակերպությունում, այն չափվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ հսումբը կորցնում է վերահսկողությունը: Հետագայում այն հաշվառվում է որպես բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտ կամ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միոցով չափվող ֆինանսական ակտիվ՝ կախված պահպանված ազդեցության չափից:

(v) Մասնակցություններ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներում

Խմբի մասնակցությունները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներում իրենցից ներկայացնում են մասնակցություններն ասոցիացված կազմակերպություններում:

Ասոցիացված կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնց նկատմամբ հսումբն ունի նշանակալի ազդեցություն, սակայն որոնցում չի իրականացնում վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն ֆինանսական և գործառնական քաղաքականությունների նկատմամբ: Նշանակալի ազդեցությունը ենթադրվում է այն դեպքում, երբ Խմբին են պատկանում մեկ այլ կազմակերպության քվեարկության իրավունք տվող ձայների 20%-ից 50%:

Ասոցիացված կազմակերպություններում մասնակցությունները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Խմբի մասնաբաժինը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն ճշգրտումներից հետո, որոնք կատարվում են ներդրման օբյեկտի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Խմբի կողմից օգտագործվողին համապատասխանեցնելու համար՝ սկսած այն ամսաթվից, երբ սկսում է գործել նշանակալի ազդեցությունը կամ համատեղ վերահսկողությունը, մինչև այն ամսաթիվը, երբ նշանակալի ազդեցությունը կամ համատեղ վերահսկողությունը դադարում է:

Երբ Խմբի մասնաբաժինը վնասում գերազանցում է վերջինիս մասնակցությունը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտում, մասնակցության հաշվեկշռային արժեքը, ներառյալ երկարաժամկետ ներդրումները, նվազեցվում է գրոյի և հետագա վնասի ճանաչումը դադարեցվում է, այն ճանաչվում է միայն այն չափով, որով հսումբը ստանձնել է պարտավորություն կամ կատարել է վճարումներ ներդրման օբյեկտի անունից:

(vi) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(b) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 15-ի (b) կետում:

(c) Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը,
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչում է ճիշտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվարկելիս արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը պարտքային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

(d) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են դրամի գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Դրամային հոդվածների հետ կապված արտարժույթով գործառնությունների գծով օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, ժամանակաշրջանի համար արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների ու վճարումների մասով ճշգրտված ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(e) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես աշխատակցի անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(f) Հարկում

Ծահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ծահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Եուրոյան ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները: Վճարվելիք կամ ստացվելիք ընթացիկ հարկի գումարը վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարի լավագույն գնահատականն է, որն արտացոլում է շահութահարկի հետ կապված անորոշությունը՝ առկայության դեպքում:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկ չի ճանաչվում՝

– այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա,

– այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք վերաբերում են դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, այնքանով որքանով հուամբն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները և հավանական է, որ դրանք չեն հակադարձվի մոտ ապագայում,

– այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գույքիլի սկզբնական ճանաչման հետ կապված:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ հուամբն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Եուրոյան ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով հուամբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալվում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե հսումբը տվյալ պահին ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և դրանք վերաբերում են շահույթահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

(g) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման, արտադրության կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

(h) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ հավանական է, որ հսումբ կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և օգտագործման համար պիտանի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և օգտագործման համար պիտանի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած վերջինիս գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը սովորաբար ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն ավելի ճիշտ է արտացոլում ակտիվում պարունակվող ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի մասերի օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- շենքեր և շինություններ 10-20 տարի
- սարքավորում 1-10 տարի

- փոխադրամիջոցներ 8 տարի
- տնտեսական գույք 8 տարի
- այլ 1-8 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(i) Ֆինանսական գործիքներ

(i) Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են սկզբնավորման ժամանակ: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, երբ հսումբը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ) կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հոդվածի դեպքում, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքը սկզբնապես չափվում է գործարքի գնով:

(ii) Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ հսումբը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում փոփոխության ազդեցությունը կրող բոլոր ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների վճարումներ են:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ

վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այնպես բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ նշանակալիորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվներ. Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի ներքո պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացումը կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջաններում ֆինանսական ակտիվների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ. Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այդ գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խմբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզերսի իրավունքի ֆինանսական ակտիվ):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղավճարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ փոխհատուցում:

Ֆինանսական ակտիվներ. Յետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը և արժեզրկումը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Դասակարգում, հետագա չափում, օգուտներ և կորուստներ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և կորուստը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտը կամ կորուստը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերափոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները վերափոխվում են, հսումբը գնահատում է, թե արդյոք վերափոխված ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են («նշանակալի վերափոխում»), սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այդ դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են վերափոխված կամ փոխարինված ֆինանսական ակտիվի դրամական հոսքերից: Խումբը գնահատում է վերափոխման նշանակալի լինելը դիտարկելով քանակական և որակական գործոնները հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվում են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար օգտագործվող ուղեցույցին համանման ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հիմք ընդունելով հետևյալ որակական գործոնները.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխությունը,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխությունը,

- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի հետ անհամապատասխանության (օրինակ՝ փոխարկման պայմանի ներառումը):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող վերափոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող չեն, վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այդ դեպքում, հումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես վերափոխումից օգուտ կամ կորուստ՝ շահույթում կամ վնասում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես վերաբանակցված կամ վերափոխված պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեք, որոնք զեղչվում են ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է վերափոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերափոխվում են վերջինիս պայմանները և երբ վերափոխված պարտավորության դրամական հոսքերը նշանակալիորեն տարբերվող են: Այս դեպքում վերափոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վերափոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե վերափոխումը (կամ փոխանակումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ վերափոխումը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է վերափոխման (կամ փոխանակման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում վերափոխման (կամ փոխանակման) ամսաթվի դրությամբ:

Խումբն իրականացնում է վերափոխման նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը:

Խումբը եզրահանգում է, որ վերափոխումը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման հնարավորության ներառում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբերվող են, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների վերափոխումը հաշվառվում է որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորուստի մաս: Եթե փոխանակումը կամ վերափոխումը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում է վերափոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

(iv) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն միայն այն դեպքում, երբ հստակ տվյալ պահին ունի գումարները հաշվանցելու իրազործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ մարել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

(j) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

Բաժնետիրական կապիտալի հետզնում, օտարում և վերաթողարկում

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետոմսերը հետ են գնվում, վճարված փոխհատուցման գումարը, որը ներառում է ուղղակիորեն վերագրվող ծախսերը՝ առանց հարկային հետևանքների, ճանաչվում է որպես սեփական կապիտալից նվազեցում: Հետզնված բաժնետոմսերը դասակարգվում են որպես գանձապետական բաժնետոմսեր և ներկայացվում են գանձապետական բաժնետոմսերի պահուստում: Երբ գանձապետական բաժնետոմսերը հետագայում վաճառվում կամ վերաթողարկվում են, ստացված գումարը ճանաչվում է որպես սեփական կապիտալի աճ, և գործարքից առաջացած ավելցուկը կամ դեֆիցիտը ներկայացվում է լրացուցիչ վճարված կապիտալում:

(k) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ

Խումբը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Խումբն առևտրական դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Խումբը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, ինչպես նաև Խմբի անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը: Ապագայամետ տեղեկատվությունը չի ներառվում ֆինանսական ակտիվների կարճաժամկետ բնույթի պատճառով:

Խումբը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Խումբը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե՝

- հավանական չէ, որ բաժանորդն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Խմբի նկատմամբ, կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներն այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում հուամբը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան համբին հասանելիք դրամական հոսքերի և համբի կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Ակնկալվող պարտքային կորուստները գեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հուամբը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցներից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, օրինակ՝ պարտազանցումը կամ ավելի քան 90 օր ժամկետանց դառնալը,
- համբի կողմից փոխառության կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը հուամբն այլ պայմաններում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ հուամբը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների արժեզրկման կորուստը չափվում է՝ ներդրման փոխհատուցվող գումարը դրա հաշվեկշռային արժեքի հետ համեմատելով: Արժեզրկման կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականներում դրական փոփոխություն է տեղի ունեցել:

(I) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ հսումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը զեղչման միջև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Չեղչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(m) Վարձակալություն

(i) Խումբը՝ որպես վարձատու

Երբ Խումբը հանդես է գալիս որպես վարձատու, ապա այն վարձակալության սկզբում որոշում է, թե արդյոք վարձակալությունը հանդիսանում է ֆինանսական թե գործառնական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգելու համար Խումբն ընդհանուր գնահատում է, թե արդյոք վարձակալությունով փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված «ըստ էության» բոլոր ռիսկերն ու հատույցները, որի դեպքում վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, իսկ հակառակ դեպքում՝ որպես գործառնական վարձակալություն: Որպես այս գնահատման մաս՝ Խումբը դիտարկում է որոշ հայտանիշներ, օրինակ՝ թե արդյոք վարձակալության ժամկետը ներառում է ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը:

(ii) Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Խմբին չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Խումբը կիրառործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած

ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, հսումբը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ Էուբայի հաստատուն վճարումները,
- վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և
- գնման օպցիոնի իրագործման գինը, եթե հսումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե հսումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե հսումբը խելամտորեն համոզված է, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների խմբի գնահատականի փոփոխություն, եթե հսումբը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնի իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ Էուբայի ֆիքսված վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որոնք չեն համապատասխանում ներդրումային գույքի սահմանմանը, հսումբը ներկայացնում է հիմնական միջոցների կազմում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ վարկերի և փոխառությունների կազմում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Խումբը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրածեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների, այդ թվում՝ ավտոմեքենաների վարձակալության համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարներն Խումբը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

26. Դեռևս չկիրառվող Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք Նոր ստանդարտներ գործում են 2025թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել Նոր կամ փոփոխված ստանդարտները:

a) *ՖՀՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»*

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական Նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնականություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել Նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Դեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

Ներկայումս Խումբը դեռևս գնահատում է Նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին հաշվետվության, դրամական հոսքերի մասին հաշվետվության կառուցվածքի և դեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Խումբը նաև գնահատում է ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության

խմբավորման վրա, այդ թվում այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

б) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (\$ՀՄՍ 9-ի և \$ՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Բնական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրեր (\$ՀՄՍ 9 և \$ՀՄՍ 7 փոփոխություններ)

27. Հետհաշվեկշռային իրադարձություններ

Հաշվետու ամսաթվից հետո խումբը փոխառություններ է տրամադրել փոխկապակցված ընկերությանը՝ "Թի Սի Ռիելթի" ՓԲԸ-ին, 1,100,000 հազար դրամի չափով: